Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ

Կ-069-14.07.2017-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 3. Հիմնական հասկացություններ

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **վարչական մարմիններ**՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, ինչպես նաև Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ.

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար.

2) **վարչարարություն**՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի

ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ»:

Հոդված 2. Օրենքի 48-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 48. Վարչական վարույթի ժամկետում վարչական ակտ չընդունելու հետևանքները

1. Եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, վարչական ակտը համարվում է ընդունված և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առոչինչ է:

3. Եթե դիմումով հայցվում է որոշակի փաստ հաստատելու կամ արձանագրելու վերաբերյալ վարչական ակտի ընդունում, որով սահմանված իրավունքները անձինք կարող են հավաստել սահմանված ձևի փաստաթղթով, ապա փաստաթուղթը չստացած անձն ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականություններից, որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթուղթը չունենալու համար:

4. Վարչական մարմինը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթուղթն իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա դիմող անձին է տրամադրում վարչական ակտն ընդունելու ժամկետը լրանալուց հետո ոչ ուշ, քան յոթնօրյա ժամկետում:

5. Վարչական մարմնի կողմից վարչական ակտը սահմանված ժամկետում չտրամադրելու հետևանքով առաջացած վնասի հատուցման կարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենքի VII բաժնի կանոնները:

Հոդված 3. Օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) Հայաստանի Հանրապետությունը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերում նշված վարչական մարմինների դեպքում, ինչպես նաև սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պետական մարմինների և օրենքով ստեղծված հանձնաժողովների դեպքում.

բ) համապատասխան համայնքը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետում նշված վարչական մարմինների դեպքում:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության *Կ-069-14.07.2017-ՊԻՄԻ-011/1* օրենքի նախագծում կատարված փոփոխությունների և լրացումների

Առաջին ընթերցում

Կ-069-14.07.2017-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 3. Հիմնական հասկացություններ

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **վարչական մարմիններ՝**

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, ինչպես նաև ~~և~~ Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ.

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար.

2) **վարչարարություն**՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ»:

~~2. Սույն օրենքի իմաստով վարչական մարմին է համարվում նաև պետական այն մարմինը կամ օրենքով ստեղծված հանձնաժողովը, որին օրենքով ուղղակիորեն վերապահվել է վարչարարություն իրականացնելու լիազորություն:»:~~

Հոդված 2. Օրենքի 48-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 48. Վարչական վարույթի ժամկետում վարչական ակտ չընդունելու հետևանքները

1. Եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, վարչական ակտը համարվում է ընդունված և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առոչինչ է:

3. Եթե դիմումով հայցվում է որոշակի փաստ հաստատելու կամ արձանագրելու վերաբերյալ վարչական ակտի ընդունում, որով սահմանված իրավունքները անձինք կարող են հավաստել սահմանված ձևի փաստաթղթով, ապա փաստաթուղթը չստացած անձն ազատվում է այն պատասխանատվությունից

կամ պարտականություններից, որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթուղթը չունենալու համար:

4. Վարչական մարմինը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթուղթն իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա դիմող անձին է տրամադրում վարչական ակտն ընդունելու ժամկետը լրանալուց հետո ոչ ուշ, քան յոթնօրյա ժամկետում:

5. Վարչական մարմնի կողմից վարչական ակտը սահմանված ժամկետում չտրամադրելու հետևանքով առաջացած վնասի հատուցման կարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենքի VII բաժնի կանոնները:

Հոդված 3. Օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) Հայաստանի Հանրապետությունը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերում նշված վարչական մարմինների դեպքում, ինչպես նաև սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պետական մարմինների և օրենքով ստեղծված հանձնաժողովների դեպքում.

բ) համապատասխան համայնքը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետում նշված վարչական մարմինների դեպքում:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-069-14.07.2017-ՊԻՄԻ-011/1 օրենքի նախագծի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
	1	**2**	**3**	**4**	
1.	ԱԺ պատգամավոր Հրայր Թովմասյան	Օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով նախատեսված նոր խմբագրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետում «և» բառը փոխարինել «ինչպես նաև» բառերով, ինչպես նաև նշված հոդվածից ամբողջությամբ հանել երկրորդ մասը:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը լրամշակվել է	Առաջարկությունն ընդունվել է